Հաստատված է
Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական
մանկավարժական համալսարանի գիտական
խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 4 նիստում
Գիտական խորհրդի նախագահ,

Ռեկտոր Ռուբեն Միրզախանյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսումնական ռեսուրսների արդյունավետության ու հասանելիության գնահատման և վերանայման ընթացակարգը մշակվել է Կրթության որակ և համապատասխանություն երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում: Փաստաթղթում տեղ գտած մոտեցումները ՀՊՄՀ աշխատանքային խմբի աշխատանքի արդյունք են, արտացոլում են եվրոպական բուհում խնդրին ցուցաբերվող մոտեցումները և ՀՊՄՀ-ում կրթական գործընթացի համապատասխանեցումը եվրոպական չափորոշիչներին և ուղենիշներին:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն ընթացակարգով սահմանվում են ՀՊՄՀ-ում ուսումնական ռեսուրսների արդյունավետության ու հասանելիության գնահատման և վերանայման խնդիրներն ու հարցերը:

1.2. Ընթացակարգի ներդրումը նպատակ ունի զարգացնել ուսանողներին մատուցվող տեղեկատվական, հաղորդակցական ռեսուրսների որակը դրա հետ կապված գործընթացների գնահատման և բարելավման միջոցով:

1.3. Սույն ընթացակարգում կիրառվող հիմնական հասկացություններն են՝ ուսումնական ռեսուրս, կրթական միջավայր, ուսուցում:

1.4. Ուսումնական ռեսուրսը /հետագայում ռեսուրսը ուսումնական համալիր է, որի կիրառումը հնարավորություն է տալիս իրականացնել ուսուցման գործընթացը մասնագիտական կրթական ծրագրին համապատասխան:

1.5. Կրթական միջավայրը բաղկացած է հետևյալ տարրերից՝ կրթության նպատակներ, կրթության բովանդակություն, դասավանդողներ, ուսանողներ, նյութատեխնիկական բազա:

1.6. Ուսուցումը ուսանողների և դասավանդողների, ինչպես նաև ուսուցման միջոցների միջև փոխներգործության նպատակաուղղված կազմակերպված գործընթաց է:

1.7. Ռեսուրսների տրամադրումը բնութագրում է անհրաժեշտ նյութական, մարդկային, տեղեկատվական, նյութական միջոցների և հնարավորությունների քանակը, որն անհրաժեշտ է գործունեությունն արդյունավետորեն իրականացնելու համար:

1.8. Հասանելիությունը ռեսուրսների նկատմամբ օրինական իրավունք ունեցող անձանց կողմից դրանք առանց խոչընդոտների իրացման վիճակն է: Հասանելիությունը *ենթադրում է այդ ռեսուրսները կարդալու, փոփոխելու, օգտագործելու և վերացնելու իրավասություններ:* Ռեսուրսը համարվում է

հասանելի, եթե այն օգտագործողները դա անելու հնարավորություն ունեն:

1.9. Այն ժամանակահատվածը, որի ընթացքում ռեսուրսն անհասանելի է եղել, կոչվում է անհասանելության ժամանակ:

1.10. Ընթացակարգը հաստատում, գնահատում և դրա մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարում է ՀՊՄՀ գիտական խորհուրդը:

1.11. *Ռեսուրսների նկատմամբ օգտագործողների իրավունքները սահմանվում են հատուկ ընթացակարգով /ընթացակարգերով/:*

2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

2.1. Ուսումնական գործընթացում ռեսուրսների օգտագործման, ինչպես նաև դասավանդողների ինքնուրույն ուսումնական ռեսուրսների ստեղծման պատրաստվածության ապահովման համար անհրաժեշտէ.

- ուսումնամեթոդական համալիր յուրաքանչյուր մասնագիտության համար,
- փաստաթղթաշրջանառություն,
- համապատասխան կրթական միջավայրում աշխատելուն պատրաստ դասավանդողների կազմ
- ուսումնառողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման հաստատված ընթացակարգ և գործիքակազմ

3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

1) ***կողմնորոշիչ ռեսուրսներ***՝

ա/ կրթական ծրագրեր և առարկայական նկարագրեր,

բ/ ուսումնամեթոդական փաթեթներ, նյութեր

2) ***փեղեկատվական ռեսուրսներ***՝

ա/ գիտական և պաշտոնական նյութեր

բ/ դասախոսություններ

գ/ ուսումնական և հատուկ գրականություն

դ/ իլյուստրացիաներ և պրեզենտացիաներ,

ե/ օրենքներ և նորմատիվ-իրավական ակտեր,

զ/ հղումներ համապատասխան գրադարաններին

է/ պարբերական հրատարակություններ

ը/ ատենախոսություններ, սեղմագրեր

3) *հաղորդակցական և սպուգողական ռեսուրսներ*

ա/ ուսանողների աշխատանքներ

բ/ ուսումնառողներ, հետազոտողներ և դասավանդողներ

գ/ Գիտակրթական կենտրոններ

դ/Իշխանության պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ

ե/ գիտագործնական սեմինարներ, գիտաժողովներ, ֆորումներ

զ/ Մասնագիտական միություններ, ասոցիացիաներ

4) նյութատեխնիկական բազա և ենթակառուցվածքներ

ա/ լսարաններ

բ/ մասնագիտական կաբինետներ,

գ/ ուսումնական և գիտահետազոտական լաբորատորիաներ

դ/ արհեստանոցներ,

ե/ աշխատեսնյակներ,

զ/ ուսումնամասնագիտական պրակտիկայի բազաներ:

4. ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

4.1. Ռեսուրսների հասանելիության գնահատումն իրականացվում է հետևյալ չափանիշների հիման վրա՝

4.1.1. ռեսուրսների ներկայացում ուսումնառողներին և կրթական ծրագրի շահառուներին,

4.1.2. ռեսուրսում պարունակվող մասի նպատակային օգտագործման հնարավորության տրամադրում,

4.1.3. ուսումնական գործընթացի մասնակիցների միջև ուսումնական, ուսումնամեթոդական, գիտակրթական, և ֆունկցիոնալ, վարչակառավարչական տեղեկատվության փոխանակում տեքստային, խոսքային, գրաֆիկական և մուլտիմեդիալ ճանապարհով,

4.1.4. ստացվող և փոխանցվող տեղեկատվության մշակում /պահպանում, տպագրում, խմբագրում/,

4.1.5. մուտք դեպքի տարբեր ուսումնական ռեսուրսների աղբյուրներ,

4.1.6. դասավանդողների և ուսանողների, ինչպես նաև միմյանց միջև անհատական և խմբային հաղորդակցման կազմակերպում,

4.1.7. նախապես որոշված տեղեկույթի մասի փոխանակում գաղտնիության պահպանմամբ և կանոնակարգված մուտքի թույլտվություն,

4.1.8. ռեսուրսների կենսագործունեության խորհրդատվական ապահովում:

5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

5.1. ՈՒՌ-ի հասանելիությունը գնահատվում է որակական չափանիշների միջոցով.

- Մասնագիտական կրթական ծրագրին համապատասխանությունը
- Գիտական հիմնավորվածությունը և առարկայի ժամանակակից գիտելիքներին համապատասխանությունը
- Համապատասխանությունը միասնական մեթոդիկային, /պարզից բարդ, նյութերի մատուցման հաջորդականության ապահովում և այլն/,
- Փաստացի սխալների, անբարո, էթիկային նորմերին չհամապատասխանող բովանդակության բացակայություն,

- Տեխնոլոգիական որակների /տպագրության որակ և այլն/ արդյունավետությունը /համապատասխանություն որակի տեխնիկական չափորոշիչներին/
- Ուսուցման /դասավանդման և ուսումնառության/ ամբողջականության և Կրթական գործընթացի բոլոր բաղադրիչների ապահովում՝ տեղեկատվության ստացում, գործնական պարապմունքներ, ատեստավորում, բոլոր պայմանների՝ լաբորատոր, նոր նյութի յուրացում, կոլեկտիվ ուսուցում և այլն /Օր.՝ գիրքը հաճախ ապահովում է միայն տեղեկատվության ստացումը/
- Ինտերակտիվ բնույթը, որն ապահովում է ինքնուրույն աշխատանքների սպեկտրի ընդլայնումը ուսումնառության ակտիվ միջոցների կիրառմամբ /հնարավոր է իրականացնել տնային աշխատանքների համեմատության շնորհիվ, որտեղ ինտերակտիվ կարող է գնահատվել գործնական առաջադրանքների առկայությունը, զուտ պասիվ հայեցողական բնույթի հանձնարարությունների փոխարեն/,
- Նոր կրթական, մանկավարժական գործիքակազմի կիրառում՝ ինտերակտիվ ուսուցում, մոդելավորում, մուլտիմեդիա, հեռահաղորդակցում, արտադրություն և այլն:

6. ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ և ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ և ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

6.1. Ռեուրսների հասանելիությունը և արդյունավետությունը գնահատվում է կրթական ծրագրի կարիքների գնահատման ընթացքում հատուկ մշակված գործիքակազմով, որը նախագծված է որակի ամբողջական կառավարման սկզբունքով: /Հավելված 1/

6.2. ՀՊՄՀ-ում ուսումնական ռեսուրսների հասանելիության և արդյունավետության գնահատումն իրականացվում է որակի ապահովման կառույցի կողմից:

6.3. Ռեսուրսների հասանելիության և արդյունավետության գնահատման գործընթացի կառավարումը և ընթացիկ հսկողությունն իրականացվում է ՀՊՄՀ Որակի ապահովման վարչության կողմից:

6.4. Ռեսուրսների հասանելիության և արդյունավետության գնահատման գործընթացի փուլերն են՝

1) Կրթական ծրագրի /ծրագրերի/ կարիքների նախնական գնահատում,
2) Տրամադրված ռեսուրսների արդյունավետության և հասնելիության ինքնագնահատում /գնահատում/,
3) ռեսուրսների արդյունավետության և հասանելիության գնահատում որակի ներքին ապահովման կառույցի պատասխանատուների կողմից և հետադարձ կապ:

6.5.Կրթական ծրագրի կարիքների նախնական գնահատումն իրականացվում է կրթական ծրագրի պատասխանատուների կողմից՝ հիքմ ընդունելով ներկայացված մեթոդաբանությունը:

6.6. Տրամադրված ռեսուրսների արդյունավետության և հասնելիության ինքնագնահատումն /գնահատում/ իրականացվում է մասնագիտական կրթական ծրագրի որակի պատասխանատուների կողմից՝ հիմք ընդունելով սույն ընթացակարգի հավելվածում ներկայացված գործիքակազմը:

6.7. Ռեսուրսների արդյունավետության և հասանելիության գնահատումը և կազմակերպվում և իրականացվում է որակի ներքին ապահովման կառույցի պատասխանատուների կողմից՝ հիքմ ընդունելով համապատասխանչափանիշները և հավելվածում ներկայացված գործիքակազմը:

6.8. Գնահատման արդյունքների հիման վրա կազմվում է ամփոփ զեկույց, հաշվետվություն, որտեղ մանրամասնորեն վեր են լուծվում կրթական ծրագրի ռեսուրսների հասանելիության և արդյունավետության համապատասխանությունը սույն ընթացակարգով նախատեսված չափանիշներին, պայմաններին: Զեկույցը պետք է ներառի նան

վերլուծություններ և գնահատականներ կրթական ծրագրի նախնական գնահատման, տրամադրված ռեսուրսների ինքնագնահատման գործընթացի վերաբերյալ:

6.9. Մշակված չափանիշների համապատասխանության դեպքում ներկայացվում է առաջարկ գործատուին՝ ռեսուրսի պահպանման /տես պահպանման, խմբագրման մասին կետը/ կամ բարելավման, վերանայման մասին:

6.10. Ամփոփ զեկույցը պետք է մանրամասնորեն նկարագրի ռեսուրսի բնութագրերը, ինչպես նաև կարող է ներառել առաջարկներ՝ հաջողված փորձի տարածման վերաբերյալ;

6.11. Վերանայման առաջարկներն ու հանձնարականները պետք է հիմնվեն ստացված հետադարձ կապի կառուցակարգերի և ազդող ուժերի ու գործոնների համակողմանի վերլուծության վրա:

6.12. Կոնկրետ գնահատման գործիքակազմի ընտրությունը կարող է փոփոխվել՝ կախված կրթական ծրագրի առանձնահատկություններից՝ նախապես համաձայնեցնելով որակի ապահովման ներքին գնահատման կառույցի հետ:

Հարգելի գործընկեր

Խնդրում ենք պատասխանել ստորև բերված հարցերին, որը մեզ հնարավորություն կտա որոշել մեր առաջնահերթությունները Ձեր ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման ընթացքում: Նախապես նշենք, որ հարցման ընթացքում հնչած կարծիքներն ու գրավոր մեկնաբանությունների գաղտնիությունը երաշխավորվում է: Հարցերին պատասխանելիս խնդրում ենք լինել հնարավորինս անկեղծ և կոնկրետ:

1. Ինչպիսի՞ կցանկանայիք լիներ Ձեզ տրամադրվող *տեղեկատվությունը, դասավանդման գործընթացը, պրակտիկան:*

2. Որո՞նք են, Ձեր կարծիքով, Ձեր ուսուցման գործընթացի դրական, ուժեղ կողմերը:

_____
_____
_____
_____

3. Ի՞նչն է խոչընդոտում ձեզ տրամադրվող ուսումնական ռեսուրսների արդյունավետության բարձրացմանը:
_____
_____
_____
_____

4. Ինչպիսի՞ կապեր կարող եք նկատել (նշել, առանձնացնել) խթանող, նպաստող և խոչընդոտող կամ խանգարող գործոնների միջև:
_____
_____
_____

5. Խնդրում ենք ձեզ ներկայացված աղյուսակում 1-10 միավորանոց սանդղակով գնահատել Ձեզ մատուցվող ուսումնական նյութերի /ռեսուրսների/՝ գրքերի, ուսումնամեթոդական փաթեթների, դասավանդման և խորհրդատվության գործընթացի, լսարանների և նյութատեխնիկական ենթակառուցվածքների արդյունավետությունը՝ առաջին սյունակում նշված չափանիշներով:

6. Ձեր կարծիքով, ձեզ տրամադրվող ուսումնական նյութերում ինչպիսի՞ փոփոխությունների անհրաժեշտություն կա.

Force Field վերլուծության գործիք /ռեսուրսների արդյունավետության գնահատման/

h/h	Չափանիշներ	Ռեսուրսների արդյունավետության գնահատում /1-10 միավոր/	ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ	գործոնների ուժգնության գնահատում	ՂԵԿԱՎԱՐՈՒՄ ԿԱՄ ՓՈՓՈԽՎՈՂ	ԽՈՉԸՆԴՈՏՈՂ գործոններ	գործոնների ուժգնության գնահատում /1-10
1)	Համապատասխանությունը մասնագիտական կրթական ծրագրի նպատակներին						
2)	Գիտական հիմնավորվածությունը և համապատասխանությունը ժամանակակից գիտելիքներին						
3)	Համապատասխանությունը միասնական մեթոդիկային, /պարզից բարդ, նյութերի մատուցման հաջորդականության ապահովում և այլն/,						

4)	Համապատասխանությունը էթիկայի նորմերին						
5)	Համապատասխանությունը որակի տեխնիկական չափորոշիչներին						
6)	Ուսուցման ամբողջականության և կրթության բոլոր բաղադրիչների ապահովում՝ տեղեկատվության ստացում, գործնական պարապմունքներ, ատեստավորում և այլն:						
7)	Ինտերակտիվությունը ինքնուրույնությունը աշխատանքների ուսուցման ակտիվ միջոցների կիրառումը						
8)	Նոր կրթական, մանկավարժական գործիքակազմի կիրառում՝ ինտերակտիվ ուսուցում,						

Force Field վերլուծության գործիք /ռեսուրսների հասանելիության գնահատման/

h/h	Չափանիշներ	Ռեսուրսների կարևորության գնահատում /1-10 միավոր/	ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ	գործոնների ուժգնության գնահատում	ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ	ԽՈՉԸՆԴՈՏՈՂ գործոններ	գործոնների ուժգնության գնահատում /1-10
1.	ռեսուրսների ներկայացում ուսումնառողներին և կրթական ծրագրի շահառուներին						
2.	ռեսուրսում պարունակվող մասի նպատակային օգտագործման հնարավորության տրամադրում,						
3.	ուսումնական գործընթացի մասնակիցների միջև տեղեկատվության փոխանակում տեքստային, խոսքային,						

	գրաֆիկական և մուլտիմեդիալ ճանապարհով,						
4.	ստացվող և փոխանցվող տեղեկատվության մշակում /պահպանում, տպագրում, խմբագրում/,						
5.	Մուտքի հնարավորություն դեպքի տարբեր ուսումնական ռեսուրսների աղբյուրներ,						
6.	դասավանդողների և ուսանողների, ինչպես նաև միմյանց միջև անհատական և խմբային հաղորդակցման կազմակերպում,						
7.	նախապես որոշված տեղեկույթի մասի փոխանակում գաղտնի ձևով և կանոնակարգված մուտքի թույլտվություն,						


8.	ռեսուրսների կենսագործունեության խորհրդատվական ապահովում:						

«ՍՏԱՏՈՒՍ ՔՎՈ»-Ն ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ	ԽԱՆԳԱՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

ԿԾ-ի նպատակները	Կրթական կարիքները
Որոնք են կրթական ծրագրի հիմնական նպատակները	Հիմնական ռեսուրսները, որոնք անհրաժեշտեն նշված նպատակներին հասնելու համար /ռեսուրսների ցանկը և գնահատման չափանիշները կցվում են/
 **GAPS** 	
Որտեղ ենք հիմա	Որտեղ ենք լինելու ապագայում, եթե հասնենք նախանշված նպատակներին
Ինչ նպաստող հանգամանքներ և խոչընդոտներ կան Ձեր նպատակներին հասնելու ճանապարհին	

Արտաքին նպաստող գործոններ, ուժեր	Ներքին նպաստող գործոններ, ուժեր
Արտաքին խոչընոտներ	Ներքին խոչընդոտներ /որոնք կախված են Ձեզնից/

Ընթացակարգ
ուսումնական ռեսուրսների գնահատման և բարելավման



Առկա ուժերի /իրավիճակի/ վերլուծություն	
Ստատուս քվոյի պահպանում: { }	Ակնկալվող արդյունքներ { }
Նպաստավոր ուժեր	սահմանափակող ուժե
{ }	{ }